ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԷԻՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 11-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ երկրի ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպման գլխավոր թեման սահմանադրական բարեփոխումների հարցն էր:

Ինչպես նշեց Վրաստանի նախագահը, համատեղ ուժերով փոխզիջման տարբերակի մշակմամբ, իրենք պետք է փորձեն երկիրը դուրս բերել սահմանադրական փակուղուց:

- Միասնական ազգային ծրագրերը զգացմունքներով չեն գրվում: Այսօր մենք այնպիսի իրավիճակում ենք, երբ միջազգային հանրություն կոչվող ոլորտում, Վրաստանի պետության վարկանիշը տատանված է: Մեր առջեւ ծառացել է ֆորսմաժորային սեղմ ժամկետներում ընդունված նախագիծ, որը գրանցվել եւ ստորագրվել է մի կուսակցության կողմից: Ես ձեզ հրավիրել եմ, որպեսզի ապացուցենք, որ չնայած քաղաքական տարբեր դիրքորոշումների, կարող ենք համաձայնության հասնել գլխավոր հարցերի շուրջ, հասնել փոխզիջման,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Նա ընդդիմադիր կուսակցություններին առաջարկել է, հաշվի առնելով առկա տարաձայնությունները, մշակել երկրի սահմանադրության սեփական տարբերակը:

-Նման փաստաթուղթ արդեն կա, դա քաղաքական փաստ է: Վերցնենք այդ փաստաթուղթը՝ որպես ելակետ, նշենք այն հիմնական կետերը, որոնք առաջացնում են տարաձայնություններ, մշակենք մեր տարբերակը, որը կհամաձայնեցնենք մեր միջեւ եւ կառաջարկենք կառավարող քաղաքական կուսակցությանը: Դրանով մեր գործընկերներին ցույց կտանք, որ ընդդիմադիր տարբեր քաղաքական ուժերը կարող են համատեղ աշխատել,- ընդգծեց երկրի նախագահը եւ հավելեց, եթե անգամ ներկայացված փաստաթուղթը չընդունվի, միեւնույն է, տարբերակի մշակումից հետո, այն կարելի է օգտագործել այլ նպատակներով:

Երկրի նախագահն ընդդիմադիր կուսակցություններին կոչ արեց ակտիվ մասնակցություն ցուցաբերել սահմանադրության նոր տարբերակի մշակման աշխատանքներին, որը կոչ է՝ երկիրը դուրս բերել սահմանադրական փակուղուց:

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻԶԵ. «ՓՈԽԶԻՋՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՄՆ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻ ԵՆ»

Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, մեկնաբանելով սահմանադրական փոփոխությունների հարցով Վրաստանի նախագահի նախաձեռնությունները, հայտարարեց.

- Մի կողմից խոսքը վերաբերում է փոխզիջման անհրաժեշտությանը, ինչը, ընդհանուր առմամբ, ողջունելի է, իսկ մյուս կողմից խոսվում է, որ անհրաժեշտ է մշակել ինչ-որ փաստաթուղթ, առանց այն կուսակցության, որին երկրի բնակչությունը սահմանադրական վստահություն է շնորհել: Մեկը մյուսի հետ անհամատեղելի են,- ընդգծեց Իրակլի Կոբախիձեն:

Անդրադառնալով սահմանադրական փոփոխությունների հիման վրա նախագահի հավանական վետոյի թեմային՝ խորհրդարանի խոսնակը հայտարարեց, որ դա «երկրի նախագահի իրավասությունն է:

- Մեզ համար գլխավոր խնդիրը կատարյալ փաստաթղթի մշակումն է, այնպիսի փաստաթղթի ընդունումը, որը կապահովի երկրի երկարաժամկետ ժողովրդավարական զարգացումը,- նշեց Իրակլի Կոբախիձեն:

ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՁԵ. «ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ԵՐՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՆԸ, ՈՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԵՐ»

Մեկնաբանելով սահմանադրական փոփոխությունների կապակցությամբ՝ Վրաստանի նախագահի հանդիպումներն ընդդիմության ներկայացուցիչների հետ, խորհրդարանական մեծամասնության ղեկավար Արչիլ Թալակվաձեն հայտարարեց.

- Սահմանադրական բարեփոխումների ողջ ընթացքում նախագահը եւ նրա աշխատակազմը բավականին սերտորեն համագործակցում էին ընդդիմադիր կուսակցությունների հետ, հաճախ անցկացնում հանդիպումներ: Բնականաբար, դա նախագահի իրավասությունն է, թե ինչ հարցեր է ցանկանում քննարկել ընդդիմության հետ,- նաեւ հավելեց, կառավարող կուսակցությունն անցել է սահմանադրական բարեփոխումների բոլոր փուլերը, որոնք նախատեսված են օրենսդրությամբ եւ ժողովրդավարական սկզբունքներով: Մասնավորապես, հիմնել են սահմանադրական հանձնաժողով, անցկացրել հանրային քննարկումներ, բանակցություններ՝ Վենետիկի հանձնաժողովի, ընդդիմության հետ, քաղաքական բանավեճեր եւ քննարկումներ, իսկ Վենետիկի հանձնաժողովի եզրակացության հրապարակումից հետո խորհրդարանում կանցկացվեն սահմանադրական փոփոխությունների երրորդ ընթերցմամբ քննարկումները:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՁԵԶ, ՍԱՄՎԵԼ ԲԵԳԼԱՐՅԱՆ, ԴՊՐՈՑԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿՅԱՆՔ ՊԱՐԳԵՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ասում են՝ Աստծու գործերն անքննելի են: Ավետարանի այս բազմախորհուրդ ասույթով միգուցե նկարագրվի այն հանդիպումը, որը տեղի ունեցավ ամիսներ առաջ Թբիլիսիի հայկական Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում:

Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի բեմադրած՝ Հովհ.Թումանյանի «Գիքորը» ներկայացումը դիտելուց հետո, ասել է, թե հուզված ու արդարության հաղթանակի հավատով, Մառնեուլիի մունիցիպալիտետի Ծերեթելի ավանի հանրային դպրոցի Միրզոեւկա գյուղի հայկական բաժնի (Վրաստանի կրթության ոլորտում ընթացող օպտիմալացման ծրագրի շրջանակներում, Միրզոեւկայի դպրոցը կցված է Ծերեթելի ավանի դպրոցին: Ն.Ա.) աշակերտները, ծնողները եւ ուսուցիչները մտան Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցի: Աստծու կամքով, այդ պահին եկեղեցում էր երեւանցի հայտնի բարերար Սամվել Բեգլարյանին պատկանող ՓԲԸ «Շեն Ջորջիա» (կազմակերպությունը զբաղվում է Վրաստանում բարձրորակ շինանյութերի արտադրությամբ եւ վաճառքով) կազմակերպության տնօրեն Վաչագան Ասատրյանը՝ ընտանյոք հանդերձ: Եկեղեցում վաղուց ծանոթ էին խնդիրներին, որոնք ուներ դպրոցը: 1995 թվականի ջրհեղեղից տուժած դպրոցը վերանորոգման չէր ենթարկվել, անմխիթար վիճակում էր: Երկհարկանի դպրոցի առաջին հարկում դասերի անցկացումն այլեւս անհնար էր: Ուստի եկեղեցում ամեն կերպ փորձում էին աջակցել, գտնել մեկին, ով սատար կկանգներ օրհասական դարձած խնդիրները կարգավորելու համար:

Եվ ահա այդ օրը եկեղեցու բակում դպրոցի հայկական բաժնի ղեկավար Վանիկ Հարոսյանի եւ Վաչագան Ասատրյանի միջեւ հեռախոսահամարների փոխանակմամբ ավարտված զրույցն իր առաքելությունը պետք է ունենար: Դեպի տուն ճանապարհին Հարոսյանը դժվարանում էր թաքցնել ուրախությունն ու հուզմունքը: Որովհետեւ, Պարոն Վաչագանը «Շեն Ջորջիա» շինարարական կազմակերպության անունից խոստացել էր ոչ միայն դպրոցին վերանորոգման համար շինանյութեր տրամադրել, այլ լրիվությամբ ֆինանսավորել կատարվելիք աշխատանքները:

Դպրոցի վերանորոգման հարցով բազմիցս հուսախաբ եղած գյուղի համար սա իրական հրաշք էր: Չանցած մեկ ամիս սկսվեցին առաջին հարկի կապիտալ վերանորոգման աշխատանքները: Տեղադրվեցին եվրոդուռ-պատուհաններ, ներբերվեցին էկոլոգիապես մաքուր ներկեր, էլէկտրական սարքեր, այն ամենը ինչ անհրաժեշտ է ուսումնական արդյունավետ ու տրամադրող ընթացքի համար:

Եվ ահա եկավ երանելի ու բաղձալի օրը: Սեպտեմբերի 15-ին Միրզոեւկայի հայկական բաժինը իր ուսումնական տարեմուտը սկսեց վերանորոգված շենքում: Օրը աննախադեպ տոնական ու հանդիսավոր էր:

Հավաքվածներին ողջունեցին դպրոցի տնօրեն Մարինա Մաճավարիանին, հայկական բաժնի ղեկավար Վանիկ Հարոսյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի կրթության նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, ծնող Մարինա Խուդաեւան, Հայաստանի հանրապետական կուսակցության փոխնախագահ Մուշեղ Լալայանը, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյանը, «Շեն» կոնցեռնի ներկայացուցիչ Վաչագան Ասատրյանը:

Ողջ գյուղի, աշակերտների, ուսուցիչների անունից շնորհակալություն ենք հայտնում Սամվել Բեգլարյանին, ինչպես նաեւ Վաչագան Ասատրյանին՝ դպրոցին երկրորդ կյանք պարգեւելու, իսկ աշակերտներին անվտանգ ու ապահով կրթության հնարավորություն ընձեռելու համար:

ՆՈՆԱ ՀԱՐՈՍՅԱՆ

Գյուղ Միրզոեւկա Մառնեուլիի մունիցիպալիտետ

9-ՐԴ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

ՍՏՈՒԴԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԴԻՊԼՈՄՆԵՐ

Հովհաննես Թումանյանը հեքիաթը համարել է «Գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունը, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են»:

Հավիտենական այդ սիմվոլներից մեկի արտահայտությունը հանճարեղ նորվեգացի հեքիաթագիր Հանս Անդերսենի «Չնե թագուհին» հեքիաթ-պիեսն է: Սեպտեմբերի 10-ին հեքիաթը կրկին բեմ բարձրացավ, այս անգամ Թբիլիսիի Ա.Խորավայի անվան թատերական ընկերության թատրոնում եւ Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի վաստակաշատ ռեժիսոր Լեւոն Ուզունյանի բեմադրությամբ: Ներկայացման մեջ զբաղված էին ստուդիայի թվով 9-րդ հոսքը ավարտած Վարդուհի էլբակյանը, Մարիետա Մելկումովան, Մարիաննա Սահակյանը, Ջուլիետա Վիրաբյանը, Ռոբերտ Հակոբյանը, Շիրազ Գալստյանը, Աշոտ Հարությունյանը, Նիկա Ղազարյանը, Լիանա Սարուխանյանը, Մարի Պողոսովան, Ալլա Ավետիսովան:

Ասենք, որ ներկայացման մեջ ընդգրկված էին նաեւ թատրոնի սիրված դերասաններ Արթուր Գրիգորյանը, Լյուբա Սահակյանը, Արամ Միքայելյանը:

Ներկայացման ավարտին, «Մասնագիտությունը դերասան» գրառումով դիպլոմները շրջանավարտ ստուդիականներին հանդիսավորապես հանձնեց թատրոնի եւ ստուդիայի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը: Դեբյուտանտների խաղը դիտելու եւ նրանց շնորհավորելու էին եկել Թբիլիսիի սակրեբուլոյի Իսանիի շրջանի պատգամավոր Իլիա Ջիշկարիանին եւ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը: Իլիա Ջիշկարիանին, ի նշան բարձր գնահատանքի, հուշանվեր հանձնեց Լեւոն Ուզունյանին:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՔԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՐԵԱԿԱՆ

ՀԵՏԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ ՍԹՐԵՍ՝ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Ահա եւ արձակուրդի վերջին օրը. երկուշաբթի օրվանից՝ աշխատանքի: Ինչպես միշտ, դա տարվա ամենածանր ու ամենաերկար օրը, որ զարմանալիորեն ամեն տարի նույն բովանդակությունն ունի: Գուցե պարզաբանեք՝ ինչպե՞ս հաղթահարել այն:

Մ.Դավոյան

Թբիլիսի

Նախ՝ նշենք, որ հետարձակուրդային սթրեսը տեւում է ընդամենը մեկ շաբաթ:

Հոգեբանները, հետարձակուրդային սթրեսներից դուրս գալու համար, խորհուրդ են տալիս շեշտը դնել քնի վրա:

Քունը այն բնական միջոցն է, որը սովորաբար բավական արագ վերականգնում է ուժերը: Եթե մարդ զգում է, որ չի հանգստացել, թույլ է, ապա իր սովորական նորմայից շատ պետք է քնի: Դրանից հետո դրական լիցքերով կարելի է գնալ աշխատանքի:

Նրանց հավաստմամբ, մարդը բացասական ապրումներ է ունենում ավելի շատ սեփական ներշնչանքից, քան՝ բուն իրադարձություններից: Ավելի լավ է մարդ դրական լիցքով զինվի եւ ավելի ուրախ գնա աշխատանքի կամ ուսումնական հաստատություն:

Արձակուրդից հետո, նորից ուսումը շարունակելու կամ աշխատանքի մասին մտածելու սթրեսի ենթարկվողները ամենաշատը մեկ շաբաթից արդեն իրենց բնականոն կյանքով են ապրում: Այնպես որ, խորհուրդ ենք տալիս՝ ի սկզբանե դրական էմոցիաներ ներշնչել իրենց, որ, օրինակ, հանդիպելու ենք մեր գործընկերներին, խոսելու, սրճելու ենք նրանց հետ եւ այլն: Ամեն մարդ էլ կարող է գտնել դրական մի բան ու դրանով առաջնորդվել:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Վերջերս բժշկի մոտ էի: Զարմանալի բան ասաց. «Նախ կարգավորեք հոգեկան առողջությունը, որ կարողանաք բուժել ֆիզիկապես»: Ասածի իմաստը չհասկացա: Գուցե դուք պարզաբանեք:

Ն.Վարդանյան

Բոլնիսի

Հոգեկան առողջությունը ինքներդ ձեզ ընդունելու եւ սիրելու կարողությունն է: Հոգեպես առողջ մարդը չի վախենում առօրյա դժվարություններից, հուսահատությունից, կարողանում է հասկանալ եւ արտահայտել սեփական հույզերը, ընդունում է քննադատությունը, հանգիստ եւ ինքնավստահ է զգում մարդկանց շրջապատում եւ հիմնականում երջանիկ է:

Առողջությունը եռանկյունի է: Եռանկյան երկու կողմերը ֆիզիկական եւ սոցիալական առողջությունն են: Եռանկյան երրորդ կողմը հոգեկան առողջությունն է: Հոգեկան առողջությունը սեփական անձը սիրելու ձեր ընդունակությունն է, այնպիսին, ինչպիսին կաք: Հոգեպես առողջ մարդը գոհ է ինքն իրենից, հանգիստ է զգում մարդկանց շրջապատում, ինչպես նաեւ ի վիճակի է ղեկավարել սեփական կյանքը, եւ բավարարել հիմնական պահանջները:

Հոգեպես առողջ մարդիկ

*կարող են հանգիստ վերաբերվել հիասթափությանը եւ գիտեն՝ ինչպես ընդունել որոշ սահմանափակումներ, որոնք պարտադրվում են անկախ իրենց կամքից,

*հիմնականում երջանիկ են ու ակտիվ, կյանքին նայում են լավատեսորեն,

*գիտակցում են իրենց զգացմունքներն ու մտքերը,

*հանգիստ աշխատում են այլ մարդկանց շրջապատում,

*կարողանում են ընդունել քննադատությունն իրենց հասցեին ու չեն հուսահատվում, եթե չի հաջողվում հասնել նպատակին, չեն վախենում խնդիրներից եւ պատրաստ են նոր դժվարությունների,

*ամբողջ եռանդով տրվում են իրենց գործին եւ իրենց առջեւ դնում են իրական նպատակներ:

Իհարկե, սա հոգեպես առողջ մարդու իդեալական կերպարն է: Ինչպես ֆիզիկական առողջությունը, հոգեկան առողջությունը եւս ունենում է իր տատանումները, որոնք կարելի է բարելավել:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԿԻՆ ԼԻՆԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

Բնությունը բոլորին չէ, որ օժտում է կատարյալ գեղեցկությամբ, բայց գրավիչ ու հրապուրիչ տեսք ունենալ կարող են բոլորն անխտիր: Այս հարցում չափազանց կարեւոր է, որ մարդ ներքուստ համոզված լինի, որ հիասքանչ տեսք ունի:

Չարժե մտածել, թե պահն արդեն բաց եք թողել, եւ ամեն ինչ կորած է անդառնալիորեն: Գեղեցկության, հրապուրիչ տեսքով շրջապատին ներկայանալու համար, պետք է պայքարել համառորեն եւ միշտ՝ անկախ այն բանից, թե քանի տարեկան եք՝ քսա՞ն, թե՞ քառասուն:

Անշուշտ, շատերը վաղ տարիքում կարծում են, թե երիտասարդությունը հավերժ է: Ինչ խոսք, «երիտասարդություն» եւ «գեղեցկություն» հասկացություններն անբաժան ուղեկիցներ են, սակայն որքան շուտ սկսեք պայքարը գեղեցկությունը պահպանելու համար, այնքան մեծ կլինի հաջողության հասնելու գրավականը:

Իսկ ինչի՞ց սկսել. ճիշտ սնվելուց: Հետեւեք ձեր քաշին դեռ երիտասարդ տարիքից: Իհարկե, այդ տարիքում քաշի ավելցուկից շատ հազվադեպ են տառապում: Այնուամենայնիվ, ձեր կարգախոսը պետք է լինի՝ քիչ ճարպեր, շատ բանջարեղեն ու միրգ: Բայց աշխատեք չչարաշահել այդ կարգախոսը, այլապես կընկնեք մյուս ծայրահեղության մեջ ու հիմա էլ ստիպված կլինեք պայքարել հյուծվածության դեմ: Եթե ուզում եք պարզել՝ արժե՞ չափավորել ընդունած սննդի քանակը, առաջարկում ենք չափազանց պարզ մի միջոց. ուղիղ կանգնեք եւ ձեռքով բռնեք փորի ճարպային շերտը: Եթե դրա հաստությունը գերազանցում է 2սմ-ը, ապա ժամանակն է, որ զբաղվեք ձեր մարմնի բարեկազմության հարցերով: Հրաշալի միջոց է խնձորային բեռնաթափման օրը: Խնձորը վիտամին C-ով հարուստ միրգ է եւ կօգնի օրգանիզմից հեռացնել տոկսինները: Նիհարելու եղանակներից մեկն էլ մարզասրահ այցելելն է կամ երկար քայլը մաքուր օդում: Կեսժամյա զբոսանքի ժամանակ դուք կծախսեք 240 կկալ, վոլեյբոլ խաղալիս՝ 310 կկալ, լողալիս՝ 375 կկալ:

Մաշկի թարմության պահպանման համար շատ կարեւոր է առողջ ու լիարժեք քունը: Օրինակ՝ արդեն 70-ն անց դերասանուհի Սոֆի Լորենը, ում հիասքանչ տեսքը կարող է շատ երիտասարդների նախանձը շարժել, հավաստիացնում է, որ կինն օրվա ընթացքում պետք է քնի 13 ժամից ոչ պակաս: Եթե այդ թիվը ձեզ համար չափազանց է, կանգ առեք գոնե 8 ժամի վրա, բայց ոչ մի դեպքում՝ դրանից պակաս:

20-25 տարեկանների համար ամենածանր մաշկային կոսմետիկական թերությունը սեւ կորյակներն են: Որքա՜ն տհաճություն են պատճառում դրանք երիտասարդ աղջիկներին: Ժամանակակից դիմահարդարման եւ բուժական կոսմետիկան ունի դրանց դեմ արդյունավետորեն պայքարելու բազմաթիվ միջոցներ: Մեծ գլխացավանք է նաեւ ճարպոտ մաշկը: Գեղահարդարման սրահներում ձեզ կարող են առաջարկել դեմքի մաշկի մաքրում, մրգաթթուներով քիմիական պիլինգ, հակաբորբոքիչ բազմաթիվ դիմակներ: Իսկ նման ծառայություններից օգտվելու անհրաժեշտ գումարներ չունենալու դեպքում, չարժե վշտանալ: Պարզապես հիշեք, որ ժամանակին մեր տատիկներն ու նրանց տատիկները նույնպես չեն այցելել գեղահարդարման սրահներ, բայցեւայնպես, ամեն մեկն իր չափով հոգ է տարել սեփական արտաքինի մասին:

Եվ այսպես, օգտակար խորհուրդներ: Մաշկը մաքրելու համար անհրաժեշտ է եռացնել 1 լիտր ջուր, ավելացնել կես կիտրոնի հյութն ու կեղեւը, 1-ական ճաշի գդալ հազրեվարդ, նարդոս, ռեհան եւ անանուխ: Գլուխը ծածկեք սրբիչով եւ դեմքը պահեք խառնուրդից բարձրացող գոլորշու վրա 15 րոպե: Այնուհետեւ, լվացվեք սառը ջրով: Խորհուրդ է տրվում այս գործողությունը կրկնել երկու շաբաթը մեկ:

Մաշկը թարմացնելու եւ ճարպոտությունից ազատվելու համար կարող եք ինքներդ պատրաստել լոսյոն. կիտրոնը շերտատեք, վրան լցրեք 1 լիտր սառը ջուր, 2-3 ժամ թողեք բերանը փակ ամանի մեջ: Քամեք եւ լցրեք ապակե տարայի մեջ եւ դրանով մաքրեք մաշկը 3-4 օր:

Դեմքի ծակոտիները նեղացնելու հիանալի միջոց է լոռամրգի հյութի ջրային լուծույթը. 1 բաժակ ջրին ավելացնեք 1 թեյի գդալ անանուխ եւ եռացրեք, թրմեք, եւ դուք կունենաք եւս մեկ բուժիչ լոսյոն:

Ճարպոտ մաշկի համար դիմակ պատրաստելու համար անհրաժեշտ է հավասար չափաքանակով իրար խառնել երիցուկի, լորենու եւ շամբուկի (թանթրվենի) ծաղիկներից. 1 թեյի գդալ խառնուրդին ավելացնել 1 բաժակ տաք ջուր եւ եփել 10 րոպե: Փոքր-ինչ հովանալուց հետո պետք է թրմել, տաք եփուկին ավելացնել 0,5-ական թեյի գդալ մեղր եւ վարսակածավարի ալյուր, որպեսզի ստացվի շիլայանման զանգված: Դիմակը դեմքին պետք է քսել տաք վիճակում, թողնել 20-30 րոպե, հետո դեմքը լվանալ տաք ջրով: Այս ամենից հետո, խորհուրդ է տրվում սառը ցնցուղ ընդունել, որ բարերար ազդեցություն կունենա դեմքի վրա:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Մանկությա՜ն օրեր, ինչո՞ւ այդպես շուտ թռաք գնացիք, անդարձ հավիտյան...

Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
(1829-1866)
Հայ գրող, հրապարակախոս

Միշտ ցույց տալով, խրատելով պետք է մանկանն ուսուցանել՝ ո՞վ է, ի՞նչ է, որտեղի՞ց է, ո՞ւր կարող է ճամփան տանել:

ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ
(1705-1791)
Վրաց բանաստեղծ

Քանի դեռ հնարավորություն կա', ապրեք ուրախ:

ՑԻՑԵՐՈՆ
(մ.թ.ա.106-մ.թ.ա.43)
Հռոմեացի քաղաքական գործիչ, փիլիսոփա

Դաժանությունը միշտ բխում է քարսրտությունից ու թուլությունից:

Ա.ԴՈԴԵ
(1840-1897)
Ֆրանսիացի վիպասան եւ թատերագիր

Չկա մի մեծագույն անհեթեթություն, որն ասած չլինի որեւէ փիլիսոփա:

Կարլ Մարքս
(1818-1883)
Գերմանացի փիլիսոփա

Ճշմարտությունը լինում է հաճախ այնքան պարզ, որ նրան չեն հավատում:

Ա.Կիրակոսյան
«Վրաստանի» ընթերցող

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ Կինը քնքշորեն դիմում է ամուսնուն.

- Սիրելիս, ես եկել եմ քեզ մոտ հեքիաթից..

- Ո՞ր հեքիաթից...

- Բարի...

- Վռնդե՞լ են...

☺ - Մաա՜մ, շուտ հասի, աստիճանը գցել եմ:

- Դե', տես, որ պապան իմացավ չէէ՜...

- Պապան գիտի՜, լյուստրայից է կախվե՜լ:

☺ - Մամ, դպրոցում բոլորը ինձ խաբեբա են ասում:

- Բալես, բայց դու վաղուց է, ինչ դպրոց չես գնում:

☺ Երկուսով անկողնում պառկած՝ հաճելի զրուցում են: Հեռախոսը զանգում է, կինը վերցնում է լսափողը:

- Ալո՞: Հա՞...Դե լավ:

Անջատում է հեռախոսը:

- Լսի, մարդս էր: Ասում է, որ հետդ շախմատ է խաղում ու ուշ է տուն գալու:

☺ Ամուսինը կնոջը.

- Բայց դու ի՜նչ ապուշն ես: Եթե ամենաապուշների մրցույթ լիներ, դու հաստատ երկրորդ տեղը կգրավեիր:

- Ինչո՞ւ երկրորդը, եթե ոչ առաջինը:

- Դե', մի ապուշություն կանեիր ու երկրորդ տեղը կընկնեիր:

☺ Շատ տգեղ ու գեր կինը ինքն իրեն նայում է հայելու մեջ, ուշադիր զննում ինքն իրեն ու ասում.

- Շատ էլ լավ է, մարդուս տեղն է...

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ ԵՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ»

Ազգային ժողովում Հայաստանի կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ, Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը, պատասխանելով պատգամավորների հարցերին, հայտարարեց, որ վերջին մեկ տարվա ընթացքում Հայաստանի մակրոտնտեսական ցուցանիշները տարածաշրջանում լավագույնն են:

- Մենք ներկայացրել ենք մակրոտնտեսական ցուցանիշներ, որոնք այսօր, թող անհամեստ չհնչի, թե՛ ԵԱՏՄ-ում, թե՛ ԱՊՀ-ում եւ թե՛ տարածաշրջանում լավագույնն են: Դա նշանակո՞ւմ է, որ մենք մեր բոլոր խնդիրները լուծել ենք: Իհարկե՝ ոչ, որովհետեւ մենք չունենք քաղաքացի, ով չի ցանկանում իր կյանքի որակը բարելավել, իսկ մեկ տարվա մեջ մենք չենք կարող լուծել բոլոր խնդիրները,- նշեց Կարեն Կարապետյանը:

Վարչապետը հավելեց, որ այն ուղղությունը, որ վերցրել է կառավարությունն այս պահին, որոշ չափով բավարար է: Միեւնույն ժամանակ, նա հավելեց, որ կան ծրագրեր, որոնց կատարման ընթացքից իրենք դժգոհ են եւ կցանկանային, որ արդյունքներն ավելի լավը լինեին:

ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է 376 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Հայաստանի կառավարությունը ներկայացրել է 2016 թվականի սեպտեմբերի 1-ից 2017 թվականի օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում ընտրված ոլորտներում արձանագրված արդյունքների վերաբերյալ հակիրճ հաշվետվությունը:

Ըստ հաշվետվության, 2017 թվականի 8 ամիսների արդյունքներով, պետական եւ համայնքային բյուջեից, վարկային ծրագրերով եւ մասնավոր հատվածի ֆինանսավորմամբ, ներդրումային ծրագրերի կատարողականը կազմել է շուրջ 376 միլիոն դոլար: 2017-ի առաջին կիսամյակում տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ստացումների (ներհոսքի) ծավալը կազմել է շուրջ 1.024 մլն դոլար, այդ թվում ուղղակի ներդրումները՝ 328 մլն դոլար (2016 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ ավելացում, համապատասխանաբար՝ 36,6 եւ 26,3 տոկոս):

2017-ի համար գործադիրը կանխատեսել է 834 մլն դոլարի ներդրումային ծրագրեր, իսկ հաշվետու ժամանակահատվածում կատարողականը կազմել է 45 տոկոս:

Ներդրվել է ներդրումների խթանման եւ ներդրողների սպասարկման «մեկ պատուհան»-ի սկզբունքով գործող համակարգը: Ներդրումների պաշտպանության եւ վստահության մակարդակի բարձրացման ուղղությամբ էլ մշակվել է օտարերկրյա ներդրումների մասին նոր օրենքը, ներդրվել է ռեդոմիցիլացիայի (վերաբնակեցման) ինստիտուտը, որով կապահովվի օտարերկրյա նոր 5-10 ընկերությունների մուտք եւ գրանցում Հայաստանում:

Նույն հաշվետվության մեջ նշված է, որ 2017 թվականի հունվարի 12-ին հիմնադրված Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնն իրականացնում է 26 ծրագիր, որ վերաբերում են պետական կառավարման համակարգին, հարկային եւ մաքսային վարչարարության, կրթության, տեղեկատվական ու բարձր տեխնոլոգիաների, տուրիզմի եւ գյուղատնտեսության ոլորտներին, ինչպես նաեւ դատական համակարգին ու հանրային-մասնավոր գործընկերության ոլորտին:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ. ԼԱՅՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ

Առաջիկայում կնքվելիք Հայաստան-Եվրամիություն համաձայնագիրը հեշտացնելու է Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի ներմուծումը եվրոպական երկրներ:

«Երեւան էքսպո» կենտրոնում, Հայաստանում ԵՄ պատվիրակության եւ Հայաստանում գործող ԵՄ առեւտրաարդյունաբերական պալատների հետ համատեղ կազմակերպված «Եվրոպան Հայաստանում» ԵՄ բազմոլորտ առեւտրային եւ ներդրումային ցուցահանդեսին նվիրված ասուլիսի ընթացքում, այս մասին ասաց եվրոպական հանձնաժողովի Առեւտրի գլխավոր տնօրինության բաժնի ղեկավար Պետրոս Սուրմելիսը:

- Եվրամիության հետ ստորագրվելիք նոր համաձայնագիրը մի շարք պայմաններ կընձեռի հայկական բիզնեսին: Այն հնարավորություն կտա զարգացնել հայաստանյան գյուղատնտեսությունը, կամրապնդի այստեղի գյուղմթերքի ներկայացումը եվրոպական երկրներում: Բիզնես միջավայրի բարելավման ուղղություններից մեկը պետական գնումների իրավիճակի բարելավումն է, եւ այս պայմանագրում մենք ունենք հատուկ պայմաններ եւ դրույթներ, որոնք հնարավորություն կտան պետգնումների գործընթացը դարձնել առավել պարզ ու թափանցիկ,- նշեց նա:

Պետրոս Սուրմելիսի դիտարկմամբ, մյուս կարեւոր գործոնը մրցակցային միջավայրի բարելավումն է: Նա նշեց, որ տվյալ պայմանագրով նախատեսվում է ստեղծել մի մարմին, որը կզբաղվի հենց մրցակցային մթնոլորտով:

- Մրցակցությունը պետք

է լինի արդար, եւ խաղի այլ կանոններ չպետք է լինեն: Այս փաստաթղթում հատուկ պայմաններ ենք նախատեսում պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների վերաբերյալ, որպեսզի նրանք խաղան նույն պայմաններով, ինչ շուկայի մյուս խաղացողները,- եզրափակեց Պետրոս Սուրմելիսը:

ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Սեպտեմբերի 15-ին գլոբալիզացման եւ տարածաշրջանային համագործակցության կենտրոնի ղեկավար Ստեփան Գրիգորյանը հրապարակեց ընթացիկ տարվա հունիսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 1-ը Երեւան, Գյումրի, Վանաձոր, Վայք, Եղեգնաձոր, Մարտունի եւ մի շարք այլ քաղաքներում անցկացված հարցման արդյունքները: Հարցմանը մասնակցել է շուրջ 900 մարդ:

Հրապարակված տվյալներով, Հայաստանի բնակչության 50,67 տոկոսը գտնում է, որ ԵԱՏՄ-ին անդամակցությունը բացասաբար է անդրադարձել երկրի վրա, իսկ 45,33 տոկոսը համոզված է, որ դրական է կազմակերպության ազդեցությունը:

Հարցին, թե Ռուսաստանը արդյոք Հայաստանի դաշնակի՞ցն է, 34,33 տոկոսը պատասխանել է դրական, 30,56 տոկոսը՝ բացասական, իսկ 35,11 տոկոսը Ռուսաստանը համարում է մասնակիորեն դաշնակից: Հարցման ենթարկվածների 40 տոկոսը գտնում է, որ Ռուսաստանի հետ սերտ հարաբերություններն արգելակում են Եվրամիության հետ Վրաստանի հարաբերություններին, թեպետ 29,6 տոկոսի կարծիքը այդ հարցում հակառակն է պնդում: 29 տոկոսի կարծիքով, Ռուսաստանի հետ հարաբերությունները մասնակիորեն են արգելակում Եվրամիության հետ Հայաստանի մերձեցմանը:

Հարցման ենթարկվածների 56 տոկոսը համոզված է, որ Ռուսաստանը բացասաբար է անդրադառնում ղարաբաղյան կարգավորման վրա, 40 տոկոսի համոզմամբ՝ Ռուսաստանի ազդեցությունը այդ հարցում դրական է:

Այն հարցին, թե որքանո՞վ է ՀԱՊԿ-ն ապահովում Հայաստանի անվտանգությունը, 15 տոկոսը պատասխանեց դրական, 41 տոկոսի կարծիքով այդ կազմակերպությունը Հայաստանի անվտանգությունը չի ապահովում: Հարցին, թե Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի դեպքում, ՀԱՊԿ-ը որքանով կօգնի Հայաստանին, 31 տոկոսը պատասխանեց դրական, իսկ 63,4 տոկոսը՝ բացասական:

Հարցման ենթարկվածների 43 տոկոսը գտնում է, որ երկրի տնտեսության ծանր վիճակը պայմանավորված է ԵԱՏՄ-ի հետ, իսկ 37 տոկոսը նման կապ չի տեսնում:

Հարցման ենթարկվածների 78 տոկոսը բացասաբար է գնահատում Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրումից Հայաստանի հրաժարումը, թեպետ 20,5 տոկոսը դրական երեւույթ է այն համարում: Եվրամիության հետ Հայաստանի հարաբերությունների ակտիվացումը ողջունել է հարցման ենթարկվածների 88,6 տոկոսը, 10 տոկոսը այն գնահատել է բացասական: Եվրամիությանը Հայաստանի անդամակցության հնարավորությունը պաշտպանել է հարցման ենթարկվածների 58 տոկոսը, իսկ 38 տոկոսը բացասական պատասխան է տվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԱՏՕ-Ի ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

Հայաստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Արտակ Զաքարյանի գլխավորած պատվիրակությունը, սեպտեմբերի 11-13-ին, ԱՄՆ-ի Վաշինգտոն քաղաքում մասնակցեց ՆԱՏՕ-ի բարեվարքության ամրապնդման նախաձեռնությանը նվիրված բարդրասդիճան համաժողովին: Համաժողովի ընթացքում փոխնախարար Արտակ Զաքարյանը հանդես եկավ ելույթով, անդրադարձավ Հայաստանի զինված ուժերում իրականացվող բարեփոխումներին եւ առաջիկա ծրագրերին:

ԱՎԱՐՏՎԵԼ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՁՈՒԼԻ ԱՀ

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը, 2017 թվականի հունվար-հուլիսին, 6,2 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, անկում է գրանցվել միայն շինարարության եւ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ոլորտներում:

Շինարարության ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 8,7 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում 2017 թվականի հունվար-հուլիսի ցուցանիշը 7,8 տոկոսով ավելացել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: 2016թ. հունվար-հուլիսի համեմատ, ընթացիկ տարում ծառայությունների ծավալն (առանց առեւտրի) աճել է 11,8 տոկոսով, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը նվազել է 2,1 տոկոսով:

ԱՃԵԼԱՅԵԼ Է ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ

Հայաստանում ապաստան հայցող անձանց թիվը 2017-ի առաջին կիսամյակում աճել է: Ամենաշատն ապաստան են հայցել Սիրայից, Ուկրաինայից, Կուբայից, Իրանից, Ադրբեջանից: Ավելացել է նաեւ ԱՊՀ երկրներից Հայաստանում կայության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվը: Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2017-ի առաջին կիսամյակում ապաստան է հայցել 55 մարդ, նախորդ տարվա 46-ի համեմատ: Այս տարի ապաստան է հայցել. Սիրիայից՝ 25, Ուկրաինայից 9, Կուբայից՝ 7, Իրանից՝ 6, Ադրբեջանից՝ 4 մարդ: Ապաստանի հայցի մերժում է ստացել 4 մարդ՝ 2-ը Իրանից, 1-ը՝ Կամերունից, 1-ը՝ քաղաքացիություն չունեցող: Նույն ժամանակում Հայաստանում կայության կարգավիճակ է ստացել 2055 օտարերկրացի:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԾՈՒԾԱՀԱՆԴԵՍԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին նվիրված «Հովհաննես Այվազովսկի. Արարում» խորագրով ցուցահանդեսին ներկայացվեցին 52 գեղանկարչական, 26 գրաֆիկական, 1 դեկորատիվ-կիրառական եւ 20 վավերագիր աշխատանքներ: Հայաստանում առաջին անգամ ցուցադրվեց Վենետիկի Մխիթարյան միաբանության հավաքածուի «Քառս. Աշխարհի արարում» հռչակավոր կտավը: Ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ սեպտեմբերի 14-ին Հայաստանի ազգային պատկերասրահում:

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(15 սեպտեմբերի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	477,00	479,75
ԵՎՐՈ	566,00	573,00
ՌՈՒԲԼԻ	8,23	8,38

Սեպտեմբերի 8-ի համեմատ, ԱՄՆ դոլարի կուրսը մնացել է անփոփոխ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ



17.09.2017 Խաչվերաց

Խաչվերացը հայ եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինն է: Այն Խաչին նվիրված տոներից ամենակարեւորն է, որովհետեւ նվիրված է գերությունից Խաչի վերադարձի եւ փառաբանության հիշատակին: Հայաստանյայց եկեղեցում Խաչվերացը տոնում են սեպտեմբերի 11-17-ն ընկած ժամանակահատվածում եղած կիրակի օրը: Սուրբ Խաչը տոնվում է ի հիշատակ Տիրոջ խաչափայտի՝ պարսկական գերությունից Երուսաղեմ վերադարձի եւ Գողգոթայում կանգնեցման (վերացման): Այստեղից էլ տոնը կոչվում է Խաչվերաց:

ՀԻՇԱՏԱԿ

ՍԻՐԵԼԻ ՌՈՄԱ, ՔԵԶ ՉԵՆՔ ՄՈՌԱՆԱ...

Թբիլիսիի թիվ 104 դպրոցի այժմ արդեն 10-րդ դասարանը ծանր կորուստ ունեցավ: 15 տարեկան հասակում մենք կորցրեցինք ջերմ, տաղանդավոր, լուսավոր հոգի ունեցող Ռոմա Սարգսյանին: Նա մեծ հարգանք ու սեր էր վայելում ոչ միայն համադասարանցիների, այլեւ դպրոցի ուսուցիչների, ընկերների եւ բարեկամների շրջանում: Օգոստոսի 5-ին դեռ նոր էր լրացել նրա 15 տարին, երբ ընտանիքը ականատես դարձավ Թբիլիսյան ծովում նրա խեղդվելու պահին...

Քառասուն օր է անցել այն օրից, ինչ նա մեզ հետ չէ: Այս մեծ վիշտը տեղ է գտել յուրաքանչյուրիս սրտում: Ցավը, որն ապրեցինք բոլորս, անտանելի է ու անբացատրելի, բայց նա միշտ կմնա մեր սրտերում: Մեր ժպտերես ու տաղանդավոր Ռոմչոն էր: Միշտ, երբ ինչ-որ առիթ էր լինում, նստում էր դաշնամուրի առջեւ ու նվագում, մենք էլ ուրախանում ու հպարտանում էինք նրա տաղանդով: Ցավոք, անավարտ մնացին նրա երազանքներն ու նպատակները...

Խոսքերով դժվար է արտահայտել նրա մարդկայնությունն ու ընկերասիրությունը: Միշտ օգնության էր հասնում բոլորիս ու շատ անգամ իր վրա վերցնում մեղքը:

Մեզանից հեռացավ մեր մեծ ընտանիքի մի անդամը:

Ռոմ, հիմա երկնքից նայում ես մեզ ու ժպտում քո այդքան պայծառ ժպիտով: Անմար կպահենք քո վառ հիշատակը մեր սրտերում, չի լինի մի օր, որ չհիշենք ու չկարոտենք քեզ: Միշտ կհիշվես ու մեր սրտերում քո անկյունը կգրավես: Քո լուսավոր հիշատակը միշտ վառ կմնա բոլորիս հոգիներում...

Համադասարանցիների անունից՝
ԷԿԱ ՄԵՀՐԱԲՅԱՆ
ԱԶԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՍՊՈՐՏ

ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆԻ ԵՎ ԲԱԱԴՈՒՐ ՋՈԲԱՎԱՅԻ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ՝ ԹԲԻԼԻՍՅԱՆ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 2-ին Թբիլիսիում մեկնարկեց եւ մինչեւ սեպտեմբերի 28-ը կշարունակվի շախմատի աշխարհի գավաթի խաղարկության մրցաշարը:

Թբիլիսյան մրցաշարը բացառիկ է շախմատի Հայաստանի հավաքականի առաջատար Լեւոն Արոնյանի համար: Հայ գրոսմայստերը 1/8 եզրափակիչ փուլում պարտության մատնեց Ռուսաստանի ներկայացուցիչ Դանիիլ Դուբովին: Քառորդ եզրափակիչ փուլում Արոնյանի մրցակիցը Ուկրաինան ներկայացնող Վասիլի Իվանչուկն է: Նշենք, որ մինչ այդ Լեւոն Արոնյանը մրցաշարից դուրս մղեց ռուսաստանցի, Եվրոպայի չեմպիոն Մաքսիմ Մատլակովին:

Մրցաշարում բացառիկ արդյունավետ խաղով աչքի է ընկնում շախմատի Վրաստանի հավաքականի անդամ Բաադուր Ջոբավան: Նա առաջինն էր, ով լրացուցիչ բրեյքում, պարտության մատնելով ռուս գրոսմայստեր Իոն Նիպոմնիաշչին, վաստակեց մրցաշարի հաջորդ փուլի ուղեգիր: Այդ փուլում նա իր ուժերը կչափի ԱՄՆ հավաքականի անդամ Ուելսի Սուի հետ:

Ընդգծենք, որ Թբիլիսյան աշխարհի գավաթի խաղարկության մրցաշարն անցկացվում է նոկաուտ համակարգով՝ մրցախաղում պարտվողը դուրս է մնում հետագա պայքարից: Բացի եզրափակիչ փուլից (խաղարկվելու է 4 պարտիա), բոլոր փուլերի մրցախաղերը բաղկացած են 2-ական պարտիայից եւ անցնում են հետեւյալ ժամակարգով՝ 90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետեւ 30 րոպե հավելում՝ առաջին քայլից սկսած յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյանով:

Մրցախաղում, ոչ-ոքի խաղի դեպքում, խաղարկվում է թայ-բրեյք՝ 2 պարտիա 25 րոպե + 10 վայրկյան յուրաքանչյուր քայլի համար ժամակարգով, կրկին ոչ-ոքիի դեպքում՝ 2 պարտիա 10 րոպե + 10 վայրկյան յուրաքանչյուր քայլի համար, կրկին հավասար արդյունքի դեպքում՝ եւս 2 պարտիա՝ 5 րոպե + 3 վայրկյան յուրաքանչյուր քայլի համար:

Այս մրցախաղում ոչ-ոքիի դեպքում խաղարկվում է որոշիչ պարտիա (արմագեդոն), որտեղ սպիտակներին տրվում է 5 րոպե, իսկ սեւերին 4 րոպե՝ 61-րդ քայլից սկսած յուրաքանչյուր քայլի համար 3 վայրկյան հավելումով: Որոշիչ պարտիայում ոչ-ոքիի դեպքում

հաղթող է ճանաչվում սեւերով խաղացող շախմատիստը: Համաձայն ՖԻԴԵ-ի կանոնադրության, աշխարհի գավաթում 1-ին եւ 2-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք կստանան մասնակցելու աշխարհի հավակնորդների մրցաշարին: Ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում 1 600 000 ԱՄՆ դոլար:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Գետ Վրաստանում, որ Մցխեթայի մոտ միանում է Քուռ գետին: 5.Ստամբուլում լույս ընծայվող հայկական պարբերական: 9.Հավաքական դերանուն: 10.Վարդազգիների ընտանիքին պատկանող թփի պտուղը: 12.Արշավորդի ժամանակավոր կացարան: 13.Նահանգ ԱՄՆ-ում: 16.Աշխարհահռչակ նկարիչ Լեոնարդո դա Վինչիի կտավներից՝ Ջոկոնդա կամ ... Լիզա: 17.Ցածրոգի, ստորակարգ: 19.Ամայի, անմարդաբնակ: 20.Օժանդակ բայ: 22.Վրաց պատմաբան ... Ջավախիշվիլի: 27.Ստորադասական շաղկապ: 28.Նար-Դոսի վիպակներից՝ «Ես եւ ...»: 30.Նոյի պատրաստած նավը: 31.Մակերեսի չափման միավոր: 32.Գիշերային լուսատու, որը կարող է լինել առանձին եւ խմբի մեջ: 35.Գետի, լճի նստվածք: 38.«Ով չի սիրում թեկուզ դուշման, լավ ...ը, լավ մարդուն» («Թմկաբերդի առումը»): 39.Հովհ.Թումանյանի դուստրերից: 41.Թշնամի, հակառակորդ: 43.Քաղաք եւ գավառ Արեւմտյան Հայաստանում, որտեղ ծնվել է Մեծ եղեռնի զոհ, հայ բանաստեղծ Սիամանթո: 44.Կեղծիք, անհավատալի, հնարովի: 45.Երկարության չափման միավոր: 46.Իտալական հայտնի ուտեստ: 49.Եվրատեսիլին Վրաստանը ներկայացնող երգիչ ... Քոչարով: 50.Երկրի անձնավորումը Հունաստանում: 51.Պետություն Եվրոպայում: 53.Կինոյի տաղանդաշատ հայ դերասան ... Գասպարյան: 54.Ամերիկյան սիգարի ստեղծող ... Խարազյան: 55.Հայկական աղվոր պար: 56.Հին Երեւանի հայտնի շուկան: 58.Մեսրոպյան այբուբենի տառ: 59.Անձնական դերանուն: 60.Բնության աղետալի երեւույթ:

ՈՒՂՂԱՀԱՅՅԱ. 2.Վրաստանի Ծալկայի շրջանի Այազմա գյուղում ծնված ... Հավասի: 3.Գետ Վրաստանում: 4.Նար-Դոսի նովելաշարի հերոսուհի: 6.Պետություն Հարավարեւելյան Ասիայում: 7.ԱՄՆ-ի Ազգային ժողովը: 8.ԽՍՀՄ մարշալ: 10.Կինոռեժիսոր Դանելիայի ֆիլմերից: 11.Հայաստանը աքքադերեն հնում այսպես են կոչել: 14.Ամերիկահայ գրող Լեւոն-... Սյուրմելյան: 15.«... ճնճղուկը բազեի ճանկերից ուզում է որս խլել»: (Չիվանի «Խելքի աշեցեք»): 18.Բրազիլացի հայտնի ֆուտբոլիստ: 21.Ամերիկահայ գրող, «Ավազե ամրոցի աղջիկները» գրքի հեղինակ ... Բոհջալյան: 23.Քաղաք Հայաստանում: 24.Օպերային հայտնի երգիչ ... Հովհաննիսյան: 25.Երրորդ դեմքի օժանդակ բայ: 26.Թբիլիսիի ... Ադամյանի անվան դրամատիկական թատրոն: 29.Մարդու ներքին օրգան: 32.Հայոց Բագրատունի թագավոր: 33.... Աստված: 34.Թերակղզի Սեւ ծովում: 35.Քաղաք Թուրքիայում: 36.Ես մնացի, նա ...: 37.Առավոտյան այն պահը, երբ լույսն ու մութը միախառնվում են: 40.Ներկա եղած, ականատես: 42.Օժանելիքի տեսակ: 45.Վրաց երգչուհի ... Գուրցկիա: 47.Հունգարական ավտոբուս: 48.Թռիչք, ոստյուն: 49.Չիու «կոշիկը»: 50.Երեւանում լույս ընծայվող գրական ամսագիր: 51.Անանուխ, նանա: 52.Շախմատի աշխարհի վրացուհի հնգակի չեմպիոն ... Գափրինդաշվիլի: 57.Մեսրոպյան այբուբենի «զինվոր»:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 4.Աստանա: 8.Առարկել: 9.Ալբերտ: 10.Էնդեմիկ: 14.Դինամիտ: 15.Դիմա: 17.Արկած: 18.Թեմատիկ: 22.Սուրամի: 23.Աֆալին: 26.Գուցե: 27.Աբխազական: 32.Ալինա: 33.Աշոցք: 35.Կիեւ: 36.Հօդս: 39.Միմաս: 41.Ակինակ: 42.Սեգ: 44.Սեուլ: 45.Սին: 46.Լիրա: 47.Անանուն: 48.Կոն: 49.Խայթ: 50.Քոշ: 51.Ժանգ:

ՈՒՂՂԱՀԱՅՅԱ. 1.Եռանդ: 2.Արսեն: 3.Հեքիմ: 5.Սոլթ: 6.Ապերիկ: 7.Աստված: 11.Դիթեր: 12.Մադամ: 13.Կիվի: 15.Դրվագ: 16.Մազից: 18.Թումբ: 19.Մահալ: 20.Տիրան: 21.Կաֆա: 24.Լուբոկ: 25.Ներքեւ: 28.Խանդ: 29.Ջիմ: 30.Կալինինո: 31.Նամակ: 34.Ցիցերոն: 37.Օդեսա: 38.Սալաթ: 39.Միսաթ: 40.Մանուշ: 42.Սիկա: 43.Գանգ:

Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445